



ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՆԱՊԱՐԶՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Եռագիրը գրածեց Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Կաթողիկոսի՝ Գարեգին Ա.ի մահը: Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Տ. Տ. Գեորգ Զ.ի նախագահությամբ գումարված Գերագույն Հոգեւոր Խորհրդի հատուկ նիստը որոշեց պատգամավորութուն ուղարկել Բեյրութ — Անթիլիաս՝ ներկա գտնվելու հանդուցյալ Հայրապետի թաղման: Պատգամավորութիւնը բաղկացած էր հինգ հոգուց՝ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը, երրուսդեմի հայոց Պատրիարքական փոխանորդ Տ. Նղիշե արքեպիսկոպոսը, ռումինահայ թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսը, Առաքել Առաքելյանը և Ստ. Անոսյանը: Մենք երեքս (Վահան արքեպիսկոպոս, Առաքել Առաքելյան և Ստ. Անոսյան) Վեհափառ Հայրապետից կարգադրութիւն ստացանք շտապ մեկնելու Լիբանան:

Հունիսի 22-ի առավոտյան մենք ինքնաթիռով մեկնեցինք Երևանից:

Մոսկվա հասնելով, պատվիրակութիւն. առաջին գործը եղավ զբաղվել վիզայի հարցով և շտապ մեկնել Բեյրութ: Սակայն հակառակ մեր ջանքերի, մեզ չհաջողվեց արագ լուծել այդ խնդիրը: Հունիսի վերջին միայն մենք կարողացանք ստանալ վիզաները և մեկնել Մոսկվայից:

Հուլիսի 1-ի առավոտյան ինքնաթիւր մեկնեց Մոսկվայից դեպի Պրագա: Պրագայի օդանավակայանում մտերիմ ժպիտով մեզ դիմավորում է Չեխոսլովակիայի Պրավոսլավ եկեղեցու էկզարխատի ներկայացուցիչ պրոֆ. Չերկեսը: Պրագայի համալսարանի հեղինակավոր և սիրված գիտական աշխատողներից մեկն է պրոֆ. Չերկեսը, դեմոկրատական Չեխոսլովակիայի ժողովրդի լուսավորութիւն և զարգացման ակտիվ և անձնավոր աշխատողը: Պրոֆ. Չերկեսի ուղեկցությամբ մենք իջնում ենք «Ալկրոն» հյուրա-

նոցում և օթեանում հարմարավոր սենյակներում: Միանգամայն անծանոթ քաղաքում ենք մենք: Ինքնաթիռով մեր ճանապարհը շարունակելու ամբողջ հոգսը իր վրա առավ հարգարժան պրոֆեսորը: Ճանապարհը շարունակելու հնարավորութիւն չկար, որովհետև Պրագայից մեկնող օդանավակայանում մի շաքաթ առաջ արդեն ծախվել էին պոմսերը: Մենք ուզում էինք շտապ հասնել Բեյրութ, որպէսզի ներկա գտնվեինք հանդուցյալ Կաթողիկոսի թաղման, սակայն չէր հաջողվում: Պրոֆ. Չերկեսը մեզ հուսադրում էր շտապ ճանապարհելու, բայց հակառակ իր կամքի մի քանի օր մնացինք Պրագայում: Մենք պրոֆեսորի հետ պտտեցինք քաղաքը և դիտեցինք տեսարժան վայրերը: Հսկա կաղամախներով ու փարթամ բուսականութեամբ հարուստ պուրակները առանձին շուք ու գեղեցկութուն են տալիս դեմոկրատական երկրի մայրաքաղաքին: Փողոցով շրջելիս ես կանգ առա ժամացույցի մի խանութի առաջ. իմ ուշադրութիւնը գրավեցին ցուցափեղկում դրված ժամացույցները. ես նախեցի նրանց. մի անսովոր, հարազատ զգացմունք համակեց ինձ այդ րոպեին. դրանք իմ հայրենի աշխարհի, Երևանի ժամացույցներ էին, որ վաճառվում էին այստեղ: Ո՛րքան սիրելի էին նրանք այդ րոպեին: Ես հիշեցի Երևանը, իմ հարազատ քաղաքի ժպտուն շենքերը իրենց դեղաքանդակ կամարներով, որոնց զվարթ տեսքը կենսախինդ տրամադրութիւն է վարթեցնում դիտողի մեջ:

Պրոֆ. Չերկեսը այցելում է մեզ և ուրախ լուր հաղորդում. տոմսերը պատրաստ են, վաղը պիտի մեկնենք Պրագայից Շվեյցարիա: Անսովոր տրամադրութիւն է համակում ինձ. շատով կհասնենք Բեյրութ և վերջ կտրվի սպասողական վիճակին: Հաջորդ օրը մեր գոհունակութիւնը հայտնելով պրոֆ. Չերկեսին, բաժանվեցինք նրանից:

Ինքնաթիռում, մեկնումից 10 րոպե հետո,

երիտասարդ սպասուհին մոտեցավ ճամբորդներին և բաժանեց բոլորին շվեյցարական երկրի քարտեզը և օրվա թերթերից մեկական օրինակ: Չխոսելով ահա՛մանն արդեն անցել էինք: Ես հետաքրքրվածաբար դիտում էի ինձ համար անծանոթ այս երկիրը, որի մասին շատ էի լսել ու շատ կարդացել: Հեռվում երևում էին Ալպերը ձյունածածկ կատարներով, ներքևում շվեյցարական հարթությունն էր ծածկված վանաչով: Ամբողջ երկիրը ներկայացնում էր երկրաչափական ճշտությամբ գծված քառակուսիներ և քառանկյունիներ: Նրանց միջով անցնում էին բազմաթիվ երկար ու սպիտակ գծեր, տեղ-տեղ նգեղված ծառերով: այդ գծերը երբեմն հատում էին իրար և խաչավորվում: Նրանք հասնում էին կանաչուտների մեջ ձգված գլուխների կամ քաղաքներին և վերջանում: Այդ ուղիղ գծերը ճանապարհներ էին, որոնք միացնում էին բնակչության կետերն իրար կամ ցանքսադաշտերին:

Երեկոյան դեմ ինքնաթիռը կանգ առավ Ցյուրիխի օդանավակայանում: Օդանավակայանի վարչությունը ճանապարհորդներին փոխադրեց քաղաք. մենք օթևանեցինք «Սենտ Գոգարդ» հյուրանոցի համարներից մեկում: Հյուրանոցի աշխատողներից մենք մտերմացանք վերելակում աշխատող Հայնցի հետ: Համալսարանի փրկիստիայական ֆակուլտետի ուսանող էր Հայնցը. կարիքը և ուսման ծախսը նրան ձգել էին այստեղ, այդ համարակ աշխատանքը տանելու: Հայնցը նկունացած էր զգում մեղ մոտ. բայց երբ տեսավ մեր բարեկամական վերաբերմունքը, սիրտ առավ, ազատ և ուրախ էր զգում. նա սիրում էր ուսանողները և սկսել էր սովորել այն. մեզ հետ խոսում էր ուսանողներին, թեկուզ անվարժ, և երբ մենք նեղվում էինք, երբեմն թարգմանի աշխատանք էր կատարում մեզ համար:

Ինքնաթիռը սուրում էր շվեյցարական կանաչուտների վրայով, մենք անցնում էինք լճերի, քաղաքների, անտառների վրայով: Շվեյցարական երկրի գեղեցկությունը չբացավ: Սկզբից կանաչադուրի, գորշ լեռնալանջերի, դարձուկների մի անհրապույր երկիր: Մենք թռչում էինք ֆրանսիական հողի վրայով: Ինքնաթիռը ճեղքում էր ամպերը և ձգտում վճիտ երկնակամարին: Բարձրաչափի սլաքը ցույց էր տալիս 3.500 մետր բարձրություն: Երևաց լազուր երկինքը և գիտության ու տարերքի պայքարն ավարտվեց առաջնի հաղթանակով: Ինքնաթիռը կապուտակության մեջ լողում էր ուժգին թափով, վարժես զգալով տարերքի սպառնալիքը, ջանում էր կանխել վտանգը: Հեռվում նկատվում է անծալը



Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյան

կապուտակություն: Միջերկրականն է դա: «Նիսա, Նիսա», լսվում է ինքնաթիռում: Ճամբորդներն են, որոնք իրենց լեզվով գոչում են «Նիսցա, Նիսցա»: Ինքնաթիռը իջնում է հանդարտ. նա պտույտ է գործում ցամաքի վրայով և կանգ առնում բաց տարածության վրա: Մի ժամից հետո ինքնաթիռը սուրում էր Միջերկրականի ջրերի վրա և ցամաքը հետզհետե չքանում էր մեր տեսողությունից: Մի քանի րոպե ևս և արդեն համատարած ջուր է, անեղր կապուտակություն, հանդարտ ու վճիտ: Երեկոյի աղջամուլը իր թևերը սփռել է այդ կապուտակության վրա, թվում է, թե մշուշը ծածկել է ջրերը: Մենք կտրված ենք աշխարհից, մարդկային հասարակությունից: Անմոռնջ տարերքն է մեր անհրապույր միջավայրը՝ վերևում եթերը անտահման, ներքևում ջուրը անդնդախոր և ահարկու: Ինքնաթիռի մեջ խորհրդավոր լուռություն է. ճամբորդների դեմքերին երևում է անսովոր լրջություն. ոչ ոք տրամադրություն չունի խոսելու: Միայն լսելի է հեղուկները ինքնաթիռի, որ սլանում էր հսկա շառաչով. ահա զարհուրում էր ահավոր մենությունից



Նրուսաղեմի հայոց Պատրիարքական տեղապան՝ գերաշնորհ Տ. Նիկիչե արքեպիսկոպոս Տերտեւյան

և ձգտում շուտ հասնել ցամաքին։ Աղջամուղջն ավելի էր թանձրանում և տեղի տալիս երեկոյան խավարին։ Ահա հեռվում նշմարվում է լուսերի աղոտ փայլը, որ սկըսում է հեազհետե ավելի ուժեղանալ։ «Հոոմը», լսվում է ինքնաթիռում։ Մոտենում ֆերբաղաքին. նկատելի են միայն սև բլուրներ, որ դիտում էինք ապշությամբ։ Մենք արդեն կայարանում ենք։ Մոտենում ենք ոստիկանության սեղանին ու հանձնում մեր անձնագրերը։ Պաշտոնյան հապճեպով արձանագրեց ինչ որ բան իր առջև դրված մատյանում և հասկացրեց, որ ազատ ենք։ Օդանավակայանը նոր շենք էր. թե նրա ներսը ինչ ճարտարապետական ոճով էր կառուցված, դժվար է նկարագրել. միայն կարող եմ ասել, որ ես իմ կյանքում դեռ չէի հանդիպել ճարտարապետական այնպիսի տգեղություն, ինչպիսին այդ էր։ Մենք այստեղ սպասեցինք մի քանի ժամ և դիշերվա ժամը 1-ին թռանք դեպի Բեյրութ։

Ինքնաթիռից յշինչ չէր երևում։ դիտելու ոչինչ չկար գիշերային խավարի մեջ։ Գուցե հենց այդ էր պատճառը, որ ճամբորդները, զրանց թվում և ես, անմիջապես ընկղմեցինք խոր քնի մեջ։

Երբ ես արթնացա, արևը դեռ նոր էր ծագել և նրա ճառագայթները ցրում էին ջրերի մեջ։ Զրեբը կարծես գողում էին վաղորդյան մեղմ զեփյուռից։ Հեռվում երևում էր Լիբանանի երկարաձիգ լեռնաշղթան. ձախ կողմում ջրի կապուտակությունն էր, իսկ աջ կողմում ծովի վրա թանձր գուլրշին, որ հանդարտ բարձրանում էր ծովի մակերևույթից և կարծես ձգտում էր հասնել սալառնակի բարձունքին, բայց նա սուրում էր դեպի առաջ արժվի հերով, ասես ողեշնչված նավահանդստի մերձեցումից։ Սավառնակը պտույտ է դործում բաղաբի վրա և իջնում։ Ինքնաթիռի սանդուղքի վրայից ես տեսա հսկա բազմություն։ Ինձ թվաց, թե ուղեկիցներ են, որոնք եկել են բարի ձանապարհ մաղթելու իրենց հարազատներին, կամ դիմավորելու զրսից եկող իրենց մերձավորներին։ Սակայն ես սխալված էի։ Այդ բազմությունը հայրենաբաղձ հայ ժողովուրդն էր, որ եկել էր դիմավորելու իր հարազատ Հայրենիքի. զավակներին։ Հեռագիրը հաղորդել էր մեր գալու մասին, ինքնաթիռը պիտի Բեյրութ ժամաներ առավոտյան ժամը 6-ին, սակայն տեղ էր հասել 3 ժամ ուշացումով։ Եվ Հայրենիքի սիրով ջերմացած այդ բազմությունը 3 ժամ սպասել էր մեր ժամանումին։ Բազմության մեջ մեզ առաջինը ողջունում է մեր դեսպանության ներկայացուցիչ արգո Արշակ Սարգսյանը, ապա Անթիլիասի հայ հոգևորականության ներկայացուցիչությունը, որի մեջ են դերաշնորհ Դերենիկ և պիսկոպոսը և հոգեշնորհ Գնել, Արշակ, Վաչե վարդապետները։ Բազմության խնդալից ողջունների տակ մենք տեղավորվում ենք մեզ հատկացված ինքնաշարժերում և շարժվում դեպի Անթիլիաս։ Հարյուրավոր ինքնաշարժներ, հեծանիվներ, մոտոցիկլետներ շարժվում են մեզ հետ։ Օդանավակայանից դեպի Կաթողիկոսարանը տանող երկար պողոտան տոնական տեսք էր ստացել։ Այդ մեծարանքը, հասկանալիորեն, այն վառ սիրտ արտա-

հայտնությունն էր, որ ցույց էր տալիս Մայր Հայրենիքից որքացած հայ ժողովրդի այս հատվածը իր հարազատ երկրին:

Մենք հասանք Կաթողիկոսարանը: Այստեղ հավաքվել էր Բեյրութի ողջ հայությունը, անհամար բաղմունքներ, որ ցանկանում էր տեսնել Հայրենիքից եկողներին: Բակում, փողոցներում, պատշգամբներում, եկեղեցու ներսում հավաքված ժողովուրդը ծեր, երիտասարդ, տղամարդիկ ու կանայք, երեսուներ, դպրոցականներ, ամենքը ճիգ էին թափում նայել մեզ և առնել Հայրենիքի կարտը: Արդարացի էր Բեյրութում հրապարակվող առաջադիմական թերթերից մեկը մեր ժամանման նվիրած ողջույնի հոդվածի մեջ գրել. «Անոնց աչքերուն մեջ կերևան Մասիսներն ու Հայրենիքը»: Միաբանության առաջնորդությամբ մենք մտանք Տաճարը, որտեղ դրված էր հանդուցյալ Հայրապետի դագաղը: Մենք մեր հարգանքը մատուցինք Հայրենիքի հավատարիմ զավակի աճյունին: Ապա դուրս եկանք տաճարից ու սանդուղքներով բարձրանում էինք դեպի դահլիճ. ժողովրդի պահանջով մենք կանգ առանք սանդուղքի աստիճաններին և մեր հայացքն ուղղեցինք հայրենակարոտ ժողովրդին: Հուզվել էր այդ տեսարանը: Հազարավոր արտասովորից աշքեր, սիրակեղ հայացքներ դիտում էին մեզ և հիշում. Հայաստանը, իրենց կորցրած օթևանը, հարազատ օջախը: Բաղմունքները չհեռացավ բակից. մեզ հետ մտան Կաթողիկոսարանի հսկա դահլիճը: Նրանք մեկիկ-մեկիկ մոտեցան մեզ, անձկությամբ սեղմեցին մեր ձեռքերը և առան իրենց կարտը:

Ժողովրդական խանդավառությունն այդ օրը ցուցադրեց անօրինակ հայրենասիրություն, անհուն սիրտ այն բոլոր զգացմունքներ, որ Սփյուռքի հայությունը տածում է դեպի Սովետական Հայաստանը և Մայր Աթոռը:

Մեր ժամանումից հետո անմիջապես հայտնի օրը Կաթողիկոսական փոխանորդ Խաղ սրբազանը դրավոր ազդարարությամբ հայտարարեց հանգուցյալ Կաթողիկոսի թաղման օրվա մասին: Խաղ սրբազանը թաղումը հետաձգել էր մինչև պատվիրակության ժամանումը Բեյրութ:

Հուլիսի 6-ի օրը Անթիլիասի Հայոց Կա-



Առաքել Առաքելյան

թողիկոսարանի բակը լեփ-լեցուն էր մարդկանցով: Բեյրութի հայությունը եկել էր հրաժեշտ տալու հայրենասեր Կաթողիկոսին: Տխուր զողանջում էին եկեղեցու դահլիճը: Պատարագում էր Խաղ արքեպիսկոպոսը: Պատարագի կեսին եղավ արարողության ընդմիջում: Բեմ բարձրացավ ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակության նախագահ Վահան արքեպիսկոպոսը և ասաց պատշաճ դամբանական¹:

Արարողությունից հետո հանդիսավոր կերպով, շարականի երգեցողությամբ տաճարից դուրս տարվեց դագաղը և ժողովրդի խումբ բաղմունքյան միջով ուղղվեց դեպի գերեզմանը, որ փորված էր տաճարի ձախ կողմում: Դագաղն իջեցրին գերեզման: Այդ ժամանակ դամբանական ճառով ելույթ ունեցավ պատվիրակության անդամ Առաքել Առաքելյանը՝ նշելով Հանդուցյալի խոշոր ծառայությունը հայ ժողովրդին ու կուլտուրային որպես մանկավարժի, գիտնականի, հասարակական գործչի և հայրենասերի, որը մինչև իր կյանքի վախճանը հավատարիմ մնաց հայ ժողովրդին, Մայր Հայրենիքին և էջմիածնի Հայրապետական դահլիճ:

1. Սրբազանի դամբանականը տպագրվում է այս համարում:— ԽՄԲ.:

